



### ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ ԱՐԱԳ ԼՈՒԾՈՒՄ ՊԵՏՔ Է ՓՏՆԷ

Կ'ԸՍԵ ՀԱՍՍԵ

Գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ երէկ վերահաստատեց պետութեան յանձնառութիւնը՝ կարելի եղածին չափ մօտ ատենէն լուծելու գաղթականներու հարցը: Ան ըսաւ, որ հանրապետութեան նախագահին եւ վարչապետին միջեւ հասկացողութիւն կայ, որ 2002 տարուան ընթացքին պետք է ամբողջացուի տունդարձի ծրագիրը, բայց նաեւ նախ անիկա վերատեսուցութեան պիտի ենթարկուի, զայն պատշաճեցնելով նիւթական միջոցներուն, պայմանաւ որ իւրաքանչիւր իրաւատէր ստանայ իր իրաւունքը, մնացեալ շրջաններուն մէջ հաշտութիւնները կատարելի եւ անոնց տնտեսական եւ ընկերային վերականգնումի միջոցները ապահովուին:

«Այս վերականգնումը պիտի կատարուի մարտիններու Սֆէյր պատրիարքի պատմական այցելութեան նուիրագործած գոյակցութեամբ եւ նախագահի փոր. Էմիլ Լահուտի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ երեսփոխան Ուալիտ Փոնպիլաթի հոգածութեամբ», ըսաւ ան:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Կիրակի, 6 Յունուար 2002, Ս. Ծննդեան տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի եւ Ջորիանէքի արարողութիւնը պիտի կատարուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզել՝  
**Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

|              |              |
|--------------|--------------|
| Ժամերգութիւն | Ժամը 7:00ին  |
| Ս. պատարագ   | Ժամը 9:30ին  |
| Քարոզ        | Ժամը 10:30ին |
| Ջորիանէք     | Ժամը 11:30ին |

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին, լսելու վեհափառ հայրապետին պատգամը եւ հաղորդուելու Ս. Ծնունդի խորհուրդով:

**ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ**  
ԾԱՆՕԹ.- Պատարագէն ետք վեհափառ հայրապետը շնորհաւորութիւններ պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ մինչեւ ժամը 1:30, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00:

### Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՇԷՆ

**ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ**  
Այն ազգայինները, որոնք կը փախաքին մատաղցու ոչխար նուիրել կամ փոխան մատաղի նուիրատուութիւն կատարել, թող բարեհաճին հետաձայնել թաղականութեան գրասենեակ, հետեւեալ թիւերուն՝ 01-328474 եւ 03-538866:

Մատաղցու ոչխարները եկեղեցի պէտք է հասած ըլլան մինչեւ Ուրբաթ, 11 Յունուար 2002:  
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ՀԱՆԷՊ ՀԱՆԷՊ ՄԱՀԱԶԴ

Տիկին Զարուհի Մոմճեան  
Տէր եւ տիկին Յակոբ Մոմճեան եւ դուստրը  
Տէր եւ տիկին Անդրանիկ Արըճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Նազարէթ Սապուհեան եւ զաւակունք  
Տիար Կարապետ Մոմճեան եւ զաւակունք  
Մոմճեան ընտանիք  
Արըճեան ընտանիք  
Սապուհեան ընտանիք  
Լէփէճեան ընտանիք  
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, աներոջ, եղբոր եւ հարազատին՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՍՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Մարտ, 1908ին)

Մահը, որ պատահեցաւ Զորքաբերի, 2 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 3 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Հայկի Նոր Գիւղի Ս. Երրորդութիւն (Զուարթնոց) եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի հայ կաթողիկէներու գերեզմանատունը:  
• Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:  
• Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նոր Գիւղ, Չուարթնոց եկեղեցւոյ կից, Ուրբաթ 4 եւ Շաբաթ 5 Յունուարին:

### ԿԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ կրօնութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտի Ռահիմ Մըրատի հետ քննարկեց կրթական հարցերը:  
Հանդիպումէն ետք Մը-

րատ ըսաւ, որ խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրիի եւ վարչապետին միջեւ տարակարծութիւնները չեն արծարծուած, եւ ինքն այս գծով միջնորդութիւն չէ ստանձնած: Ան յայտնեց, որ «տիրող

միջնորդը ակտիվ է»: Հարցումի մը պատասխանելով՝ Մըրատ անհաւանական նկատեց, որ կառավարութեան այսօրուան նիստին կատարուին պետական պաշտօնեաներու նշանակումներ:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՍԱՐՔԵՐՈՎ ՕԺՏԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Պետական վարչամէքենայի բարգաւաճման հարցերու նախարար Ֆուատ Մատ երէկ այցելեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի, ապա յայտարարեց, որ անոր հետ քննարկած է արտասահմանի մէջ Լիբանանի դեսպանատուները հաղորդակցութեան արդիական արթնքով նախարարութեան կապերու ծրագիրը:

Մատ ըսաւ, որ այժմ երկար ժամանակ կը խլէ պատրաստութիւնը արտասահման գտնուող իրանացիներու պաշտօնական թուղթերուն, որոնք արտաքին գործոց նախարարութեան խողովակով կը փոխանցուին պետական վարչութեանց եւ դեսպանատուներուն. բայց այս ծրագիրին շնորհիւ ամէնօրեայ կապ պիտի հաստատուի եւ պիտի արագանայ այդ գործերը:

Մատ ըսաւ, որ ծրագրի ուսումնասիրութիւնը պիտի աւարտի երեք շաբաթէն, իսկ 3 - 4 ամիսէն Պարիզի դեսպանատունը պիտի ըլլայ այս դրութեամբ նախարարութեան հետ առաջին կապուողը:

### ԱՊԻ ԱՍԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԵԹԸԼՆ ՈՒ ՔԻՆՇԸՆԸ

Արտաքին գործոց նախարարութեան քաղաքական հարցերու բաժնի վարիչ Նածի Ապի Ասի երէկ ընդունեց այցելութիւնները Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլի եւ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինշընի:  
Պէթըլ հանդիպումէն ետք ոչ մէկ յայտարարութիւն կատարեց, մինչ Քինշըն, պատասխանելով թղթակիցներու այն հարցումին, թէ ահաբեկչութեան մասին երոպական անուանացանկը Հնդկալայի չէ՞ անդրադարձած, հաւաստեց, որ երոպական Միութիւնը միակամ է, թէեւ ինք անոր ներկայացուցիչ չէ. այնուհանդերձ բազմաթիւ պետութիւններ երկօտութեան մէջ են երոպայի հետ միացեալ սահմանում տալու ահաբեկչական արարքներուն, եւ յիշեալ անուանացանկը կրնայ վերատեսուցութեան ենթարկուի:

Վինսընթ Պէթըլի եւ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինշընի:  
Պէթըլ հանդիպումէն ետք ոչ մէկ յայտարարութիւն կատարեց, մինչ Քինշըն, պատասխանելով թղթակիցներու այն հարցումին, թէ ահաբեկչութեան մասին երոպական անուանացանկը Հնդկալայի չէ՞ անդրադարձած, հաւաստեց, որ երոպական Միութիւնը միակամ է, թէեւ ինք անոր ներկայացուցիչ չէ. այնուհանդերձ բազմաթիւ պետութիւններ երկօտութեան մէջ են երոպայի հետ միացեալ սահմանում տալու ահաբեկչական արարքներուն, եւ յիշեալ անուանացանկը կրնայ վերատեսուցութեան ենթարկուի:

**ԽՕՍԵՑԵԱԼՔ**  
ՀՈՒՐԻ ԳՐԻԳՈՐ ՅՐԷՆԿԻԻԵԱՆ  
ԸՆԴ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԻՌԵԱՆ  
1 ՅՈՒՆԻՍԻՐ 2002

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**  
• Սոյն ձեռնարկին Ամանորի առիթով իր ծնողաց յիշատակին՝ ազգային մը կը ստանանք օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

### ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ  
**4. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ**  
**«ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒՐԱՆ ՆՈՐ ՏԱՐԻ»**  
**ԱՍԱՆՈՐԻ ՈՒՐԱՆ ԸՆԴԵՍԸ**  
Բեմադրութիւն՝ ՎԻԳԷՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ  
Պար՝ ՏԵԼԻԲՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
Երգ՝ ՉԱԶԱՐ ԲԵԾԻԾԵԱՆ  
Մասնակցութեամբ՝ Լամազգայի «ԱՐԵԳ», «ԳԱՅԻԱՆԵ», «ԿԱՐԿԱՉ» եւ «ԹՈՐՈՍ ՈՍՍԻՆ» մանկապատանեկան միաւորներուն:  
Ելոյթները կը շարունակուին Հինգշաբթի 3 եւ Կիրակի 6 Յունուար 2002, կէսօրէ ետք ժամը 5:00ին: ԵՐԵՎԱՆԻՑԻՑ՝ Ուրբաթ 4 Յունուար 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» բաւերասրահի մէջ:  
• Տոմսերը կը վաճառուին՝ Գրատուն ՕԵԼԻՃ (Ամբիլիաս), Լամազգայի Գրատուն (Պուրճ Լամուտ), Տիւրքի ԳԵԿԱ (Պուրճ Լամուտ), Սիւտիո ՎԱՉԷ (Լամուտ), Լամազգայի «Լ. Ճանք» կեդրոն (Պուրճ Լամուտ) եւ Ելոյթի օրերը կիշէն:

### Գրատուն ՈՍԿԵԴԱՐ

• Ունինք ձեր փնտած գիրքերը եւ բառարանները  
• Ոսկեդարի ԵՐԱԶԱՀԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր  
• Չարագումի միահատոր Համայնագիտարաններ՝  
Պուրճ Լամուտ, Ս. Փրկիչ եկեղեցւոյ կից Հեռ.01/264750  
P.O.Box 11-8877 Beirut Lebanon

### ՄԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՆԴՐԱԴԱՐՉԱԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԺԳՈՐԾԻԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Մարոնիներու եպիսկոպոսներու խորհուրդը երէկ Պէթըրքի մէջ Նասրալլա Սֆէյր պատրիարքի զիջատութեամբ գումարուած իր ժողովէն ետք հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ անդրադարձաւ տնտեսական դժուարութիւններուն եւ իշխանութեան պետերուն միջեւ հարցերուն:

Հաղորդագրութիւնը նկատել տուաւ, որ պարուտը ապահովելու հոգը անքնութիւն կը պատճառէ լիբանանցիներուն, որոնք հարց կուտան, թէ ի՞նչպէս կարելի է դուրս գալ տնտեսական տագնապէն, երբ պարտքերը օրստօրէ կը բազմապատուին, եւ ասոր վրայ կ'աւելնան յաւելեալ արժէքի տուրքը, անգործութեան վատթարացումը եւ առօրեայ պէտքերը հոգալու անկարողութիւնը, որուն դիմաց չկայ այս տագնապէն դուրս գալու միացեալ ծրագիր:

Հաղորդագրութիւնը նաեւ ըսաւ, որ վերջերս երկու բարձրաստիճան պաշտօնատարներու միջեւ պետական պաշտօնեաներու նշանակումներուն եւ արարական վեհաժողովի գումարումին շուրջ ծագած տարակարծութիւնները, որոնք լրատու միջոցներով հանրային կար-

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ԵԼԵԿՏՐՈՎԿԱՆՈՒԹԵԱՆ ընկերութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ բացի վարչական Պէյրութէն, բոլոր շրջանները պիտի ստանան օրական միայն 16 ժամ հոսանք, որովհետեւ Սուրիոյ Չառայի եւ Հալէպի էլեկտրակայաններուն մէջ խանգարումներու պատճառաւ Տէյր Նպուհ - Այնճար գծով Սուրիայէն հոսանքի ներածումը դադարած է:

• ՆԵՐՔԻՆ գործոց նախարար Էլիաս Մըր երէկ հրապարակեց որոշում մը, որուն հիմամբ վերջին անգամ ըլլալով կ'երկարաձգուի ինքնաշարժներու հին, պարզ թիւերը նոր եւ «քրտոնով թիւերով փոխարինելու պայմանաւ՝: Նոր պայմանաւճամբ է 31 Յունուար 2002. այս թուականէն ետք հին թիւ կրող ինքնաշարժի սեփականատէրը կեղծ թիւ կրողին համարժէք պատժի պիտի ենթարկուի:

• ՖԻՆԻԼԻ հնդկական վորամաը երէկ պարպեց Մարձալունի Իպլէն Սաքի շրջանի դիրքը, որ Տիւնիզի կարեւորագոյն «լոմիսթիք» դիրքերէն էր. հոն գտնուող պիտուրներն ու սարքերը փոխադրուեցան Նաքուրա:  
Դիրքին մէջ հաստատուեցան իրանաւեճ բանակի եւ ներքին ապահովութեան ուժերու միացեալ վորամասէն ջոկատներ:

### ԱՐՑԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

• Նոր Տարուան առիթով, Պրն. Տիգրան Խորգումեան 50 տոլար

«ԱԶԱՍՄԱՐՏ» ԱԿՈՒՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ  
**CHEESE AND WINE**  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 4 Յունուար 2002, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ, ակումբիս «Չուխատարեան» սրահին մէջ:  
• Ճոխ յայտագիր:  
ՍԱԿ՝ 10,000 L. Ո.

ԱՅՇԻԼ - ԸՒՄԵՆԱՆՈՐԾԱՅԻՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ ՍՏՏՈՒԿ  
**ՕԳՏՈՒԻՐ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԴԱՐՉԻՐ**  
ԳՐԱԿԱՑՈՒԹԵԱՆ  
**BANKERS ASSURANCE SAL**  
ԱՅՇԻԼ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ ՍՏՏՈՒԿԻՆ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԵՆ ԸՍՏԱԶՁԱՅԻՆ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԻՒՄԸ. ԼՈՍԸ, ՃԻՆԻՇԵԱՆ ԸՆԽԱՐԱԿԸ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԸՆԽԱՅՈՂՆԵՐՈՒ ՄՈՒԹԻՒՄԸ  
ԱՅՇԻԼԻ ՄԱՍ ԿԱԶՄԵՆՈՎ ԿԸ ԽՆԱՅԷ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՒՄԵՆԱՆՈՐԾԱՅԻՆ ՍՏՏՈՒԿԸ:

### ՀՆԴԿԱՍՏԱՆ - ՓԱՔԻՍՏԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՄԵ ՀԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՏԱԿԱԲԻՆ ԱՌԿԱՅ

Հնդկաստան - Փաքիստան սահմանագիծին վրայ կացութիւնը կը մնայ լարուած, թէեւ Նիւ Տէյլի կը լուսայ, որ դիւանագիտութիւնն ու միջազգային ճնշումը պիտի կարենայ փարատել պատերազմի մը սպառնալիքը:

Հնդկաստանի պաշտպանութեան նախարար-  
Ծար.ը՝ էջ 10

### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԱԿՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր սիրելի ժողովուրդին, որ Կիրակի, 6 Յունուար 2002 թուին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեան Սերոյ Յիսուսի Զրիստոսի տօնին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագ եւ քարոզ՝  
**ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐՔ. ՏԵՄԻՐՃԵԱՆ**

|  |   |
|--|---|
| Սկիզբ ժամերգութեան<br>Ս. պատարագ<br>Ջորիսէք<br>Զարոզ | Ժամը 7:30ին<br>Ժամը 10:00ին<br>Ժամը 10:30ին<br>Ժամը 11:00ին |
|--|---|

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան եւ վերահանրագուելու իր քրիստոնէական հաւատքին մէջ:

ԾԱՆՕԹ. Ծարաթ, 5 Յունուար 2002ին, ճրագաւորի ժամերգութիւն տեղի պիտի ունենայ կէսօրէ ետք ժամը 3:30ին, իսկ պատարագ՝ ժամը 5:00ին:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ԻՐԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ - ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՒԼ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Իրանի դատական պահպանողական իշխանութիւնները կը շարունակեն ձեռքարկելու հրամանագիրներ ու բանտարկութեան վճիռներ արձակել բարեկարգչական կրօնաւորներու, մտաւորականներու ու երեսփոխաններու դէմ:

Իրանի ուսանողական լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ կրօնական պահպանողական ատենանոց մը ձեռքարկուած է պատանակ կրօնաւոր Ահմէտ Քապէլը, որ աւելի լայն պատուիրակներու մոզովորակութիւն կը քարոզէ իսլամական հանրապետութեան մէջ: Քապէլի քոյրը յայտնեց, որ իր եղբայրը ձեռքարկուած է Երկուշաբթի գիշեր իր բնակարանէն, Քոմ քաղաքին մէջ: Ան աւելցուց, որ ձեռքարկուած է քանի մը ժամ առաջ Քապէլին պահանջուած է ներկայանալ կրօնաւորներու հարցերով վարչապետի յատուկ ատենանոցին: Աւելի ուշ, դատա-

րանէն ներկայացուցիչներ եկած են Քապէլի հետ խօսելու բնակարանին մէջ, սակայն հոն հասնելէ ետք, պահանջած են, որ իրենց հետ երթայ: Միւս կողմէ, խորհրդարանի նախագահ Մեհտի Քառուպի դատապարտեց ձեռքարկուած բարեկարգչական երեսփոխանի մը, դիտել տալով, որ մեծ անօթ զգացած է Սէնտակաւն Արաքիա այցելութեան ընթացքին:

Երեսփոխան Հոսէյն Լոքմանեան բանտարկուեցաւ անցեալ շաբաթ՝ դատական պահպանողական իշխանութիւնները հրապարակաւ քննադատած ըլլալուն համար: Քառուպի, որ Երեքշաբթի օր վերադարձաւ Սէնտակաւն Արաքիա կատարած ութօրեայ այցելութենէ մը, ըսաւ, որ Լոքմանեանի ձեռքարկուած էր իր այցելութեան վրայ: Քառուպի աւելցուց, որ այս հարցին լուծումը պիտի հետապնդէ Իրանի երեք իշխանութիւններուն ղեկավարներուն հետ: Քառուպի կ'ակնարկէր նախագահ Մոհամէտ Խաթեմիի, դատական

իշխանութեան պետ ալաթոլա Մահմուտ Հաշէմի Շահրուտի եւ խորհրդարանին: Սակայն Քառուպի չըսաւ, թէ խաթեմիի եւ Շահրուտիի հետ երբ հանդիպում պիտի ունենայ: Խորհրդարանի նախագահը յայտնեց նաեւ, որ ճամբորդութեան ձեռնարկելէ առաջ, չէր պատկերացներ, որ նման բան կրնայ պատահիլ: Ան աւելցուց, որ երեսփոխաններ իրաւունք ունին քննադատելու եւ թէ ոչ ոք իրաւունք ունի անոնց դէմ միջոցառումներ որդեգրելու:

Դատական իշխանութիւնները կը պնդեն, որ երեսփոխանները առանձնալատկութիւններ չունին եւ թէ անոնք ալ դատական հետապնդումի կ'ենթարկուին եթէ օրէնքը խախտեն:

● ԽՈՒՄԲԱ մը պատանակ իսլամական այլախոհներ, որոնք իսլամական պետութեան դէմ դաւելու յանցանքով կ'ամբաստանուին, նախագահ Խաթեմիի ուղղուած բաց նամակով մը պահանջեցին հանրութեան դիմաց կատարել դատավարութիւնը:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՉ ԲԱԽՈՒՄՆԵՐ

ՄՈՍԿՈՒՎ. 2 (ՌՈՅԹԸՐԸ). - Չեչէն պիտեայնէր Չորեքշաբթի օր յայտնած են, թէ անջատողական հանրապետութեան մէջ պիտուորներ 10 գիւղացիներ սպաննած են, մինչ Մոսկուա ըսած է, թէ սպառնալիքեան յայնածիր գործողութիւն մը նոյն շրջանին մէջ տասնեակներով պիտեայնէր բնաջնջած է:

Ըստ ըմբոստներու համաձայնի կայքին, 6 կիւնէր եւ միամեայ մանուկ մը սպաննուած են, 3 չափահասներու կողքին, երբ ռուս պիտուորներ Երեքշաբթի գիշեր Յոգին - Եուրթ գիւղին վրայ ձեռնառումներ արձակած են:

Ըմբոստները յայտնած են, թէ ռուս 40 կիւնէր սպաննուած են հոն եւ հանրապետութեան այլ վայրեր, ներառեալ՝ մայրաքաղաք

Ծար.ը՝ էջ 10

### ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Տեան Սերոյ Յիսուսի Զրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Սուրբ Նշան Մայր եկեղեցոյ մէջ: Պիտի պատարագ եւ քարոզ՝

**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ**  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

|  |  |
|--|--|
| Սկիզբ ժամերգութեան<br>Ս. պատարագ<br>Զարոզ<br>Ջորիսէք | Ժամը 7:30ին<br>Ժամը 9:30ին<br>Ժամը 10:30ին<br>Ժամը 11:30ին |
|--|--|

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին, հաղորդուելու ու զօրանալու համար Բեղեմեան Խորհուրդով:

ԴԻՒՆ ԱԶ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան Սուրբ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուարին, շնորհաւորութիւնները պիտի ընդունի ԲԱՂԱԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ մէջ, առաւօտեան պատարագէն ետք մինչեւ ժամը 1:00, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 6:00:

### ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Համազգային ճեմարանի շրջանաւարտներու միութիւնը կը կազմակերպէ

### CHEESE AND WINE

Հաւաքոյթ մը, Ծարաթ, 12 Յունուար 2002, երեկոյեան ժամը 8:00էն սկսեալ, «Մելանքոն եւ Հայկ Արսլանեան» սրահին մէջ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿ՝ 25,000 L. Ո.

### ՍՈՒՐԻԱ՝ ՄԱԿ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՉ ՄՆԱՅՈՒՆ ԱՆԴԱՍ

Սուրիա եւ չորս այլ երկիրներ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի նոր անդամները դարձան Երեքշաբթի օր, փոխարինելով հինգ այլ անդամներ, որոնց երկամեայ նստաշրջանը աւարտած է:

Սուրիա, Պուկարիա, Քամերուն, Կինիա եւ Մեքսիքա կը փոխարինեն Պանկատէշը, Ժամայքան, Մալին, Թունուզը եւ Ուքրանիան:

Ապահովութեան Խորհուրդի ոչ մնալուն տասը անդամները երկամեայ դրութեամբ կ'ընտրուին Ընդհանուր Ժողովին կողմէ: Սուրիա ընտրուեցաւ Հոկտեմբերին 177 քուէներէն 160ը ապահովելէ ետք: Անոր մեկենասութիւնը ներկայացուած է ահիական խմբակին կողմէ: Ապահովութեան Խորհուրդի ոչ մնալուն տասը անդամներէն մեկը վերա-

պահուած է արաբական երկրի մը: Ուշիկըն, որ տակաւին ահաբեկչութիւն հովանաւորող երկիրներու շարքին կը դասէ Սուրիան, դէմ չկեցաւ անոր թեկնածութեան, հակառակ անոր որ Քոնկրէսի անդամներ եւ Իսրայէլ պահանջեցին, որ դէմ դնէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

#### ԻՆՉՊՄԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեռով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

#### ԻՆՉՊՄԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.  
● ԱՅԿԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ  
● Համազգային գրախանութ, Պուրճ Համուտ  
● Գրատուն Caravelle, Չալքա  
● Գրատուն Sava, Այնճար  
● Գրատուն Կոմիտաս, Պէյրութ  
● Obelix հաստատութիւն, Անթիլիաս



#### FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԵՏԵԿԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՉ

1. CORAL JAL EL DIB, Ժլ Էլ Տլ
2. HYPCO ANTELIAS, Հարաթ Ալ Դաուարնէ
3. SPEED ANTELIAS, Կաթողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապատէք մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէն առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանքինայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Ղաճասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիխայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITIHAD, Կալէրի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ցանար, Նատրը պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագա»ի կից
15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիւն Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԶԱՐՏԸ  
ԿԸ ՍՍԱՆԱՔ  
ՉՐԻՕՐԵՆ  
ԱՐԺԷ-ԶԱՒՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ  
ԵՒ ԻՆՔՆԱԾԱՐԺ ՄԸ

La lumière en privilège  
ou lumière en privilège

**G. AYANIAN & SONS**  
Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayzé, (01)447000-445396 - (05)627728/9. Fax: (01)265187-582357

### ԼԱԻԱԳՈՅՆ ՄՏԱԾՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆԻՆ

**\$269**

**\$119**

Model 21D3XMJ 21inch FLAT

2 Head VCR Model V-E28 \$119  
4 Head VCR Model V-E38 \$149

ԱՐԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ  
Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի  
հրապարակ, հեռ. 241000





# Հրամանատար Գրառու

## ԲԱՅ ՆԱՄԱԿ ՆԱԽԱԳԱՀ ԴՈՐՏ ՈՒ. ՊՈՒՇԻ

Արիել Շարոնի՞ն Իսրայելի վարչապետին հետ բարեկամական կապեր մշակելով, իրականության մեջ ամերիկեան վարչամեքենան կը նույնացնէք մեր ժամանակի ամէնէն բիրտ ահաբեկիչներէն մէկուն հետ: Միայն կը ցանկամ, որ հրահանգէք իր ասպարէզին շուրջ արագ վերաբնութիւն մը կատարել: Ինքն էր, որ առաջնորդեց 1982ին Լիբանանի վրայ Իսրայելի յարձակումը՝ աւերելով մեր երկիրը եւ միաժամանակ լիբանանցի քաղաքայիններուն պատճառելով անհաշիւ վնասներ, Լիբանանի մայրաքաղաքը՝ Պէյրութը ենթարկելով աւելի քան եօթնասուն օրուան դժոխային պաշարումի, անպատմելի աւեր հասցնելով մեր ընկերութեան եւ տնտեսութեան, ինչպէս նաեւ Պէյրութի մօտակայքը գտնուող Սապրայի եւ Շաթիլայի գաղթականներուն մէջ վերահրակելով պատմութեան ամէնէն սուկալի ջարդերէն մէկը: Եթէ այս ամբողջը ահաբեկչութիւն է, ի՞նչ է:

Ներկայիս Պրիւքսիլի դատարաններուն մէջ Շարոն դատավարութեան կ'ենթարկուի մարդկութեան դէմ իր գործած զարկելի ռմիթներուն համար: Աշխարհի մեր մասին մէջ այսքան շատ անհատներու եւ կազմակերպութիւններու իբրեւ ահաբեկիչ ձեր ցանկագրումը, որ թէեւ անարդար է, աւելի արժանահատ կ'ըլլար, եթէ ցանկին մէջ ներառած ըլլայիք Շարոնը:

Ինչպէս գիտէք, ահաբեկչութիւնը ոչ միայն կը գործադրուի անհատներու եւ կազմակերպութիւններու կողմէ, այլ նաեւ պետութիւններու: Իր կազմութեան ի վեր Իսրայել բոլոր չափանիշներով եղած է ահաբեկիչ պետութիւն մը: Ան իրենց տուներէն եւ հայրենիքէն վտարած է հարիւր հազարաւոր պաղեստինցի ընտանիքներ, եւ այժմ անոնք իբրեւ գաղթականներ կ'ապրին Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի եւ Պաղեստինի կեղտոտ գաղթականներուն մէջ:

Հետեւողական եւ անողորմ կերպով Իսրայել մինչեւ ծայր տարած է արաբ պաղեստինեան հողին վրայ իր հասողութիւնը՝ կազմելով ապօրինի համաձայնագիրներ, որոնք ամբողջովին կ'անտեսեն սեփականութեան իրաւունքները: Այլուողակ է այն, որ ամերիկեան քաղաքականութիւնը ազուրկ կերպով օրինականացուցած է Իսրայելի կողմէ այլ ժողովուրդներու հողին գրաւումը, իբրեւ ահաբեկիչներ երկրակցացնելով օրինական տերերը, հակառակ անոր որ անոնք միայն կը պայքարին պաշտպանելու համար իրենց տարրական իրաւունքները:

Իբրեւ ահաբեկիչ՝ Իսրայել իր նկարագիրը նաեւ բացայայտած է վերջին երկու տասնամեակներուն ընթացքին գրաւուած պահելով լիբանանեան տարածք մը: Այս մէկը բարձրագույն արհամարհանք մըն է ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի թիւ 425 որոշումին, որ 1978ին պահանջեց լիբանանեան հողերէն Իսրայելի անմիջական ու առանց պայմանի հեռացումը: Այդ թուականէն ի վեր Իսրայել Լիբանանի եւ անոր ժողովուրդին դէմ գործադրած է բրտութիւններու կրկնուող արարքներ, որոնց գագաթնակետը կը հանդիսանայ այն շարքը, որ հրահանգեց Լիբանանի Կանայի ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ ապաստանած աւելի քան հարիւր լիբանանցիներու կեանքը խլելը: Անարդար է, որ ամերիկեան դիտակիւնէն մեկնած իսրայելեան գրաւումը դէմ պայքարողները ահաբեկիչներ որակուին, մինչ Իսրայել մեղաւոր չճանչցուի իր սպանութիւններուն համար:

Առանց տատամսելու, Իսրայելի գրաւման դէմ պայքարող պաղեստինեան կազմակերպութիւնները որակած էք ահաբեկիչներ, առանց դուք ձեզի ուղղելու հետեւեալ հարցումը, Իսրայել ի՞նչ գործ ունի ուրիշներու հողին վրայ:

Իբրեւ Ամերիկայի բոլոր արժեքներուն բիրտ հակադրութիւն Իսրայել կը փորձէ բիրտ ուժով չէզոքացնել պաղեստինեան դատը՝ գործածելով ամէնէն արդիական եւ մահացու Ամերիկայի կողմէ տրամադրուած գնեքերը: Աւելին. տարեկան երեք միլիար տուր արժողութեամբ ամերիկեան օժանդակութիւնը Իսրայելի կարելիութիւն կ'ընձեռն շարունակելու պաղեստինեան հողերուն վրայ բնակեցման նոր վայրեր կառուելու իր ծրագիրները՝ խտացնելով պաղեստինցի ժողովուրդին պայմանները եւ բարդացնելով պաղեստինեան դատին լուծման համար ի գործ դրուած որեւէ ճիգ: Իսրայելեան համազարկի տակ մահացող մանուկի մը (Մոհամետ Տուրա) պատկերը ամբողջապէս է:

Բոլորս կը գորակցին պաղեստինեան հարցին խղաղ լուծման՝ ՄԱԿի բանաձեւերուն ծիրին մէջ, յատկապէս՝ թիւ 242 եւ 338 բանաձեւերուն, որոնք հաստատուած են յաջորդապէս 1967ին եւ 1973ին, ինչպէս նաեւ՝ թիւ 194 բանաձեւին, որ կ'ընդունի գաղթականներուն տունդարձի իրաւունքը: Սակայն ամերիկեան

ՍԵՆՏՐ ՀԸՍ  
«Տէլի Սթար»  
Շարը՝ էջ 8

## ԱՅԽԱՐԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՊԱՆՈՎԱԿԱՆ ՅԵՐԻՒՐԱՆՔՆԵՐԸ ԶԱՅՆ ԴՐԱԾ ԵՆ ՄԱԿԻ ԶԱՐԵՍՏԻՆ ՍԵՋ

# ՂԱԺԱՐ ԳԻՒՂԸ ՊԵՏԻ ՄԻԱՆԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐԱԻՆ

Պատմական տրեւանները կը վկայեն, թէ ՄԱԿի որդեգրած միջազգային քարտէսները (յատկապէս արարական երկիրներուն), գծուած են Ֆրանսացի եւ անգլիացի հովանաւորներու շահերուն եւ տրամադրութիւններուն համաձայն: Անոնք արարական կարգ մը երկիրներու վրայ իշխած են սպասելով հրէական պետութեան մը ստեղծումին, սակայն այդ սպասուած պետութիւնը փոխարինուեցաւ Իսրայելի ստեղծումով:

Իսրայելեան վերջին գրաւումներուն եւ աշխարհագրական ու ապահովական յերիւրանքներով լեցուն գծուած քարտէսներուն հիման վրայ Ղաթար գիւղը երկու մասի բաժնուեցաւ. քարտէսներուն համաձայն, հիւսիսային մասը լիբանանեան եղաւ եւ ազատագրուեցաւ Իսրայելեան գրաւումներէն, իսկ հարաւային մասը տակաւին կը մնայ Իսրայելեան լուծին տակ:

Սակայն իրողութեան մէջ այդ շրջանը Յունիս 1967ի պատերազմին գրաւուած է եւ անիկա մասնաճիւղ կազմէ կողմնի բռնադատուած սուրիական շրջաններուն, որոնք կը գտնուին միջազգային սահմանագիծին վրայ: այդ շրջաններուն բնակիչները կը դիմազբաւեն զանազան ժողովուրդներուն, որոնցմէ գլխաւորը այն է, թէ տուններէն ոճանք

բաժնուած են երկուքի. նշանակալից ու խոհանոցը կը գտնուին Իսրայելեան բռնազբաւեալ մասին մէջ, իսկ նստասենեակն ու բաղնիքը՝ լիբանանեան:

Ղաթարի լիբանանեան բաժինը մտնողը կը զգայ, թէ իր քան անարդար են միջազգային քարտէսները, որոնք կը փաստեն, թէ Ղաթարը ամբողջով ընդունուած է լիբանանի միջին հարաւային լիբանանեան թէ սուրիական, ինչպէս՝ պաղեստինեան գիւղերն ու քաղաքները: Սակայն միջազգային ընտանիքը ոչ մէկ ձեռով կը փորձէ Իսրայելեան բռնազբաւումներէն դուրս բերել այդ շրջանները, հակառակ այն որոշումներուն, որոնք տրուած են այս առնչութեամբ: Իրողութիւնը այն է, թէ մեծ պետութիւնները կը գործադրեն կը համընդհանր իրենց շահերուն, եւ մէկ կողմ կը ձգեն ուրիշները՝ առանց նկատի առնելու ժողովուրդներուն ճակատագիրները: Այս կացութեան մէջ կարգ մը քարտէսներու հիման վրայ

բաժնուած են կը կատարուին, մինչ ուրիշները կը մնան դարակներու մէջ:

Վերջին տեղեկագիրներուն համաձայն, հարաւային Ղաթարի մէջ կան բազմաթիւ ապահովական եւ զինուորական հարցեր, որոնք կրնան պատճառ դառնալ, որ Իսրայելեան արտադրութիւնները կ'օգտագործեն: Անոնք կը խմեն լիբանանեան Ուազգանի գետի ջուրէն, սակայն իրենց գաւակները կը յաճախեն Իսրայելեան վարժարան, պարտադրաբար կը սորվին երբայրէն լեզուն՝ արարելէն եւ ֆրանսերէնին կողքին: Աւելի

լուծումներէն ի վեր, ինչպէս պատահեցաւ պաղեստինցիներուն հետ 1948 թուականէն մինչեւ այսօր:

Ղաթար գիւղը, որ կը գտնուի բռնազբաւեալ Քոնէյթրայի մօտերը, կը բաղկանայ 1800 բնակիչէ եւ անոր շրջակայքը կը գտնուին Ապսիա եւ Ուազգանի շրջանները եւ Ուազգանի գետը: Իսկ միւս գիծին վրայ կը գտնուի Մազրաթ Մազր Շպաա գրաւեալ շրջանը, որ վերածուած է զինուորական կեդրոնի:

Ղաթար գիւղը իր հարաւային եւ հիւսիսային բաժիններով կը սպասէ նոր հանգրուանի մը: Անոնք այսօր կը գտնուին անբնական վիճակի մէջ: Ընտանիքներն ու բարեկամները իրարու այցելութիւններ տալու համար կ'անցնին հարաւային Ղաթարէն հիւսիսային կամ հակառակը՝ անոնք պէտք ունին Իսրայելեան յատուկ արտօնագիրի՝ համալսարան կամ դպրոց երթալու համար, թէեւ տունէն դպրոց հեռավորութիւնը 10 մեթրէն աւելի չէ, սակայն Իսրայելեան հասկացողութեամբ, ՄԱԿի քարտէսներով եւ Թէրի Լարսնի կապույտ գիծին համաձայն, այդ գիծը կը համարուի «միջազգային սահման»:

Ղաթար գիւղը իր հարաւային եւ հիւսիսային բաժիններով կը սպասէ նոր հանգրուանի մը: Անոնք այսօր կը գտնուին անբնական վիճակի մէջ: Ընտանիքներն ու բարեկամները իրարու այցելութիւններ տալու համար կ'անցնին հարաւային Ղաթարէն հիւսիսային կամ հակառակը՝ անոնք պէտք ունին Իսրայելեան յատուկ արտօնագիրի՝ համալսարան կամ դպրոց երթալու համար, թէեւ տունէն դպրոց հեռավորութիւնը 10 մեթրէն աւելի չէ, սակայն Իսրայելեան հասկացողութեամբ, ՄԱԿի քարտէսներով եւ Թէրի Լարսնի կապույտ գիծին համաձայն, այդ գիծը կը համարուի «միջազգային սահման»:

Ղաթար գիւղը իր հարաւային եւ հիւսիսային բաժիններով կը սպասէ նոր հանգրուանի մը: Անոնք այսօր կը գտնուին անբնական վիճակի մէջ: Ընտանիքներն ու բարեկամները իրարու այցելութիւններ տալու համար կ'անցնին հարաւային Ղաթարէն հիւսիսային կամ հակառակը՝ անոնք պէտք ունին Իսրայելեան յատուկ արտօնագիրի՝ համալսարան կամ դպրոց երթալու համար, թէեւ տունէն դպրոց հեռավորութիւնը 10 մեթրէն աւելի չէ, սակայն Իսրայելեան հասկացողութեամբ, ՄԱԿի քարտէսներով եւ Թէրի Լարսնի կապույտ գիծին համաձայն, այդ գիծը կը համարուի «միջազգային սահման»:

Ղաթար գիւղը իր հարաւային եւ հիւսիսային բաժիններով կը սպասէ նոր հանգրուանի մը: Անոնք այսօր կը գտնուին անբնական վիճակի մէջ: Ընտանիքներն ու բարեկամները իրարու այցելութիւններ տալու համար կ'անցնին հարաւային Ղաթարէն հիւսիսային կամ հակառակը՝ անոնք պէտք ունին Իսրայելեան յատուկ արտօնագիրի՝ համալսարան կամ դպրոց երթալու համար, թէեւ տունէն դպրոց հեռավորութիւնը 10 մեթրէն աւելի չէ, սակայն Իսրայելեան հասկացողութեամբ, ՄԱԿի քարտէսներով եւ Թէրի Լարսնի կապույտ գիծին համաձայն, այդ գիծը կը համարուի «միջազգային սահման»:

Ղաթար գիւղը իր հարաւային եւ հիւսիսային բաժիններով կը սպասէ նոր հանգրուանի մը: Անոնք այսօր կը գտնուին անբնական վիճակի մէջ: Ընտանիքներն ու բարեկամները իրարու այցելութիւններ տալու համար կ'անցնին հարաւային Ղաթարէն հիւսիսային կամ հակառակը՝ անոնք պէտք ունին Իսրայելեան յատուկ արտօնագիրի՝ համալսարան կամ դպրոց երթալու համար, թէեւ տունէն դպրոց հեռավորութիւնը 10 մեթրէն աւելի չէ, սակայն Իսրայելեան հասկացողութեամբ, ՄԱԿի քարտէսներով եւ Թէրի Լարսնի կապույտ գիծին համաձայն, այդ գիծը կը համարուի «միջազգային սահման»:



Իսրայել քաղաքի այդ շրջաններէն: Եթէ Իսրայել իր գործերը հեռացնէ հիւսիսային Ղաթարէն, անիկա մաս պիտի կազմէ այն ազատագրուած շրջաններուն, որոնցմէ հեռացաւ Իսրայել անցողեւ Մախսին, մէկ տարբերութեամբ, որ այս շրջանի բնակիչները սուրիացիներ են:

Ղաթարի բնակիչները կը շարունակեն օգտագործել Իսրայելեան դրամ, կը վարեն Իսրայելեան թիւերով օտարական ինքնաշարժներ, արայէլեան բռնազբա-

## ԻՐԱՆՑԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Լաւատեղեակ աղբիւրներ յայտնեցին, որ իրանցի նախագահական պատուիրակ Մոհամէտ Սատըրի կարգ մը յայտնի պաշտօնատարներու հետ հանդիպումները այն տպաւորութիւններ ձգած են, որ պէտք է Իսրայելի պատրուակ չտալ բռնարարներու ծիրը ընդլայնելու, վարքագիծ մը, որ որդեգրած է Իսրայելի վարչապետ Արիէլ Շարոնի պաղեստինցի ժողովուրդին դէմ: Այդ հանգիստները այն տպաւորութիւններ ձգեցին նաեւ, որ գոյութիւն ունի լուրջ աշխատանք մը արգիւելու համար Արիէլ Շարոնը Լիբանանի դէմ տեղի ունենալիք որեւէ ոտնձգութեան, այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ Միացեալ Նահանգներ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի պիտակին տակ արձակած են Արիէլ Շարոնի ձեռքերը «Իսլամական ժիհադ» եւ «Համաս» խայտառակ կազմակերպութիւններուն դէմ:

Աղբիւրները յայտնեցին, որ Թեհրան ներկայիս կը հետապնդէ կացութեան կայունացումը հարաւային ճակատին վրայ՝ գիտնալու համար պաղեստինցիներէն տագնապին ճակատագիրը պաղեստինեան իշխանութիւններու ղեկավար Եասէր Արաֆատէն եւ այլ շրջաններէ պաշարման օղակի վերացումէն եւ երկու կողմերուն միջեւ բանակցութիւններու վերսկսուած է ետք:

Աղբիւրները նշեցին նաեւ, որ իրանցի պատուիրակը տեղեկացուցած է, որ իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի իր ամբողջ կշիռը դրած է գիտնալու համար իմամ Մուսա Սատըրի ճակատագիրը, եւ թէ վերջինիս անհետացման հարցը կը ներկայանայ իբրեւ Խաթեմիի առաջնահերթութիւններէն մէկը: Խաթեմի կը յուսայ, որ ընդառաջէ Լիբանան այցելութեան իրեն ուղղուած պաշտօնական հրահանգին յառաջիկայ Մարտ - Ապրիլ ամիսներուն: Աղբիւրները կը նկատեն, որ Սատըրի առաքելութիւնը այս ժամանակաշրջանին շատ կարեւոր է, որովհետեւ կոչ

կ'ուղղէ յաւելեալ համերաշխութեան, համագործակցութեան եւ հանդիպուեցման՝ շրջանցելու համար այս տագնապալի հանգրուանը: Կարեւորը հաւանական պայթուածի մը վնասագործումն է եւ օգտուելն է 11 Սեպտեմբերի ժխտական անդրադարձներէն, որոնք հազարաւոր արաբ զբօսաշրջիկներու արգիւեցին իրենց արձակուրդները Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ անցնելէ, այդ վատ վարմունքին պատճառով, որ իրենց դէմ իրագործուեցաւ:

Աղբիւրներու ունեցած տեղեկութիւններուն համաձայն, յայտնի արաբ նախարար մը լիբանանցի կարգ մը պաշտօնատարներու եւ առաջին հերթին հանրապետութեան նախագահ Էմիլ Լահուտի հետ հանդիպումներու ընթացքին անոնց ուղղութիւնը հրաւիրած է այն հարցին վրայ, որ Լիբանան պէտք է մեծ ճիգեր թափէ նշեալ զբօսաշրջիկները եւ հանգիստ փնտռողները հրաւիրելու համար Պէյրութ եւ լեռնային շրջաններ, ինչ որ շատ օգտակար կրնայ հանգիստանալ լիբանանեան տնտեսութիւնը աշխուժացնելու աշխատանքին մէջ, սակայն ասոր գործադրութեան համար, (ըստ նախարարի մը, որ ուզեց իր անունը չնշել), անհրաժեշտ է ապահովել հետեւեալ նախադրեանքները.

- ա.- Ամրացնել ներկայիս տիրող ապահովական կայունութիւնը,
  - բ.- Ապահովել ջուրի եւ էլեկտրականութեան մատակարարումը 24 ժամուան տեւողութեան վրայ,
  - գ.- Աշխատիլ ապականումը վերացնելու համար Լիբանանէն:
- Աղբիւրները նկատեցին, որ եթէ

ապահովուին այս նախադրեանքները, Լիբանան պիտի վերադառնայ իր նախապատերազմեան վիճակին:

Այդ աղբիւրները յայտնեցին, որ այդ հարցերը կարելի է իրագործել յառաջիկայ ամիսներուն ընթացքին:

ԽԱԼԻԼ ՖԵԼՅՎԱՆ

«Նահար»

**Yerevan**

Armenian products  
Gifts For Any Occasion

Address : Bourj Hamoud, Municipality Street, Facing Center Arinc, # 63 Street Fax: 01/254747  
Tel.: 01/254747 - 03/348105, E-mail: tammy@lynx.net.lb

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԽՐԻՄԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԹԱԹԱՐԱԿԱՆ ԵՒ ԴԵՆՈՎԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ


Խրիմ Ժ. Դարու վերջաւորութեան քաղաքական մեծ վերելքային շարժումներու ենթակայ դարձաւ: Թաթարական հզօր Ոսկէ Հորդալի պետութիւնը քայքայուեցաւ Լենկթիմուրի հարուածներուն տակ, մեծ վնասներու ենթարկուեցան իրիմի քաղաքները, առեւտրական ցամաքային ուղիները որոշ ժամանակ կորսնցուցին իրենց նշանակութիւնը, թէեւ ծովափնեայ քաղաքները մնացին իրենց տարացնիկ առեւտուրի կեդրոնները: Թաթար թափառաշրջիկ ցեղախումբեր իրարու դէմ պայքարի դաշտ իջան տիրոջմէնք ձեռք ձգելու համար, մինչեւ որ Գրիքէյներու ստեղծ իշխանութիւնը հաստատեց իրիմի վրայ:

Րուսական ասպատակելու ճնշումով հարկաւորուեցան իրիմի քաղաքները: Մամայ խան նոյն օրերուն՝ 1380ին կողպտաւորական մեծ արշաւանք մը կազմակերպեց ռուսներուն դէմ: Ընդունակութիւնը, որոնք յանձնառութեան տակ մտած էին օժանդակելու իրենց կարգին զօրք տրամադրեն: Այսպէսով արշաւանքին միացան կաֆայի ճեղքով վական զօրքերը (որոնք փոքրթիւրք էին) եւ հայկական զինեալ ջոկատները: Մամայ խանին բանակը, մտաւորապէս 100էն 150 հազար կոռուղ, ճամբայ ելաւ եւ հասաւ Տոն գետի ափերը, ուր իր դէմ գտաւ Մոսկուայի եւ Վլատիմիրի մեծ իշխան Տմիթրիի ռուսական տաւր հազարնոց զօրքը: Ծակատամարտ տեղի ունեցաւ 8 Սեպտեմբեր 1380ին, Տոնի աջ ափին, Քուլիքովի մէջ: Թաթարները սկիզբը յառաջադիպեցին արձանագրեցին, բայց յետոյ ռուսները պահեստի ուժերը իրենցը եւ, հակառակ իրենց փոքր թիւին, կազմակերպուած դիմադրութիւն ցոյց տուին: արիւ-

քերը ներխուժեցին Անդրկովկաս եւ Սիւնիքէն անցած ժամանակ, 1385ին, մեծ աւերածութիւններ գործեցին Վայոց Ձորի մէջ: Թողթամիշի երկու մասի բաժնուած զօրքը միաւորուեցաւ Արցախի մէջ, ապա Շիրվանի վրայով վերադարձաւ Տալիշի Ղազարի իրեն հետ տանելով 200 հազար զօրք, որոնց մէջ կային տասնեակ հազար հայրէջ, Սիւնիքէն եւ Արցախէն: Թողթամիշ խան 1387ին հաստատեց ճեղքով ճեղքուած դաշինքը՝ իրեն վարձատրութիւն, որովհետեւ ճեղքով ասպանած էին իր թշնամի Մամայ խանը: Թողթամիշ 1391ին կոռուր բռնուեցաւ Լենկթիմուրի հետ: Լենկթիմուր Թողթամիշը քիչ քան ռուսական տափաստաններէն, նուաճեց զայն եւ գահընկէց ըրաւ: Նոյն օրերուն թաթարական հատուած մը տիրապետութիւն հաստատեց իրիմի մէջ մասին վրայ եւ իրեն հպատակ խանութիւն մը հաստատեց: Թաթարներ այդ օրերուն զգուշացան կոռուր բռնուելէ ճեղքով ցեղերուն հետ: Այդ օրերուն ճեղքովական հակակշիռէ դուրս ընկող հայերը մեծ ներդրութիւններ ունեցան կուլուցան: Դժուարութեան մատնուեցան նաեւ ճեղքովացիները, որոնց տիրոջմէնքը հետզհետէ կը սեղմուէին: Հայեր աշխատեցան ամէն ձեւով զօրավիզ կանգնել ճեղքովացիներուն:

Թողթամիշ, որ ծանր պարտութիւն կրած էր Լենկթիմուրէն, այնուհետեւ նոր բանակ մը պատրաստեց եւ 1395ին ներխուժեց Կովկաս, բայց ծանր պարտութիւն կրեց ըրաւ Թողթամիշի բանակը, որմէ ետք գրաւեց ու հրդեհեց Ոսկէ Հորդալի քաղաքները: Լենկթիմուր հասաւ մինչեւ Մոսկուա եւ ժամանակ մը գրաւեց զայն: Ոսկէ Հորդան այսպէսով աստիճանաբար քայքայուեցաւ եւ նոր խանութիւններ կազմաւորուեցան: Թողթամիշ այնուհետեւ պայքարի մէջ մտաւ Թեմիւր-Լենկթիմուրի դէմ եւ սպանուեցաւ 1406ին, Սիպերիոյ Շաղիբէկ խանի կողմէ: Իրերայաջորդ որ պատերազմներուն պատճառով մեծապէս տուժեցին իրիմի քաղաքները եւ որոշ ժամանակ մեծ հարուած ստացան միջազգային առեւտրական ցամաքային ուղիները: Թաթարները մէջ մտաւ Թեմիւր-Լենկթիմուրի դէմ եւ սպանուեցաւ 1406ին, Սիպերիոյ Շաղիբէկ խանի կողմէ: Իրերայաջորդ որ պատերազմներուն պատճառով մեծապէս տուժեցին իրիմի քաղաքները եւ որոշ ժամանակ մեծ հարուած ստացան միջազգային առեւտրական ցամաքային ուղիները:

Սիւնիքը ունիթոռներուն միանալով լատին եկեղեցւոյ կապուած էին, աստիճանաբար սկսան գաղթել դէպի եւրոպական երկիրներ: այս պատճառով ալ 1420ական տարիներէն ետք լատինադաւան հայ համայնք չմնաց իրիմի մէջ: Այս նոյն ժամանակաշրջանին, Ժ. Դարու վերջաւորութեան եւ Ժ. Դարուն սկիզբը թաթար թափառաշրջիկ ցեղախումբեր տարածուեցան իրիմի տարբեր շրջաններուն մէջ եւ անոնցմէ խմբավորուեցան բնակչութիւնը հաստատեցին Սուրխաթի (Հին իրիմ), Գարսուպազարի, Պախչիսարայի, Եւպատորիայի, Չուֆութ Գալայի եւ անոնց յարակից շրջաններուն մէջ, ուր անոնք հայերուն հետ դրացնութիւն եւ ընդհանրապէս լաւ յարաբերութիւն հաստատեցին օգտուելու համար հայուներուն ներկայացուցած տնտեսական եւ թուական ուժէն: Այս ժամանակ հայկական հոծ բնակչութեամբ Սուրխաթի թաթար խանութիւն կեդրոնացուեցաւ: նշեմք, որ այդ օրերուն հոն կը գործէին հայկական Ս. Աստուածածին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Սիմէոն, Ս. Խաչ, Ս. Յարութիւն, Ս. Ստեփանոս, Ս. Գէորգ, Ս. Օգոստոս եւ Ս. Սարգիս եկեղեցիները, հայր Յովհաննէսի մեծապատիւները, եւ քաղաքէն քիչ մը հեռու Ս. Խաչ գործարանները: Անուանի էին մանաւանդ ջուլահայները, կաշեգործները, բրուտները, հիւսնները, դարբինները, որմնաղորները, ոսկերիչները եւ նաւաշինարար արհեստարանները: Ժ. Դարու վերջաւորութեան եւ յաջորդող տարիներուն կիրիկիայէն գաղթական կարգ մը հայեր իրիմի մէջ բնակութիւն հաստատեցին: Անոնց մէջ կային անուանի նկարիչներ, որոնք կիրիկեան մանրանկարչութեան ազդեցութիւնը ստրածեցին իրիմի հայկական մանրանկարչութեան դպրոցին վրայ: հայկական մանրանկարչութեան դպրոցին վրայ, գիւնչեք, որ գրչութեան ամէնէն նշանաւոր կեդրոններն էին կաֆայի եւ Սուրխաթի:



Կաֆայի (Թողթամիշ) հայոց Ս. Յովհաննէս Սկրտիչ եկեղեցին

